

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	
Տարեկան	10 Ժր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 Ժր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մանուցման տոյր առաջին երեսին համար 40 սանթիմէր է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմէր է. երեսին աւելի անգամներու համար 20 010 գեղը կը լրացայ:

# ՇՆԱԿՏՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԿԹ ՕՐԵՐԸ

Նախակ եւ դրամ դրկէյ  
Խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣсникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեն տուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

«ՇՆԱԿՏՈՒՄ» 1900ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 1ին կսկսի «Շարժում» երրորդ տարեշրջանը հետեւեալ պայմաններով:

Պոչխարիոյ համար տարեկան	12 Ժր.
» » վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար տարեկան	15 »
» » վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար տարեկան	3 օջաւր
» » վեցամսեայ	1.50 »
Պոչխարիոյ համար ձեռքի 15 սանթիմէր	
Արտասահմանի » »	20 »

Բաժնեգրիները կանխիկ են: Ամէն բաժանորդ իր հասցէին հետ մէկտեղ պէտք է բաժնեգրի զրկէ. ապա թէ ոչ «Շարժում» չի զրկուիր:

Մեր գործակալներէն կը խնդրուի հաղորդել մեզ՝ չը վճարող բաժանորդներուն անունները, որպէս զի այդ մարդոց թերթերը դադարեցնենք:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Շարժում» երկրորդ տարեշրջանը աւարտելուն մէկ ամիս մնաց. մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած, թող բարեհաճին զըրկել իրենց բաժնեգրիները:

Փետրուարի 1ին պիտի սկսի երրորդ տարեշրջանը. նախորդ տարուան պարտքերը՝ չը վճարուին «Շարժում» չը պիտի զրկուի: Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ բոլոր այն բաժանորդներու և գործակալներու անունները, որոնք խիղճը ունին հայ թերթի մը վարձքը ուտելու:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ամերիկայի գործակալներէն կը խնդրենք որ շուտով մեզ հասցունեն դրամները, հաշիւները և բաժանորդներու ցանկը, նշանակելով նաեւ թէ որ ամսէն են սկսած «Շարժում» ստանալ:

— Կ. Բաղդար, Մ. Յ. Հ. — Չեր զրկած Աւստրիական փոստով 6 Ֆրանքը ստացանք, բայց երկու Ֆրանք եւս կը պարտիք մեր նոր պայմաններուն համաձայն:

## 1900

Շնորհաւոր ՆՈՐ ԴԱՐ, հայ ժողովուրդ, այս անգամ ոչ նոր տարի: Եւ իսկապէս տարին շատ կարճ ժամանակամիջոց է ժողովրդային իդէալական բաղձանքները իրականանալու համար, մանաւանդ մեզ նման մի ժողովրդի որ իր բաղձանքներին հասնելու համար շատ ուշ շարժվեց, նոյնիսկ, աւելի ճիշդը, մի դար առաջ ոչ մի իդէալական բաղձանք ունէր:

Գիտես ի՞նչ էիր դու մի դար առաջ, հայ ժողովուրդ. խաւարի մէջ խորատուզված, բարոյապէս ախտաւոր, բռնակալներով ոտքերը լիող մի անարգ գերի, հարստահարող և բթամիտ կղերի անխօս գործիք և քո անարգ վիճակից զոհ մի սարկական փարախ:

Եւ մէկ դարը, 19րդը՝ հաշիւ հաղ կերպարանափոխեց քո ներքին աշխարհը, այն էլ մասամբ: Այսօր, մի դար յետոյ, դու բռնակալներ յապտամբ գերին ես, ազատութեան սեղանի վրա, որը աւելի սուրբ է քան երկընքում գտնվածը, տասնեակ հազարներով արիւնաթաթախ ողջակէզ գրիւր. զգում ես ազատ հայրենիքի ազատ գաւակ լինելու ծարաւը. որ աւելի յարգի է քո ողորմելի հովիւներ ջարդող զած երկնային գրախտի բնակիչ լինելու. բաղձանքից, և հասկացել ես թէ քո դարեւոր ստրկութիւնը ոչ թէ նախախնամութեան պատիժն է, այլ քո բարոյական և մտաւորական պակասութիւնների անխտափելի արդիւնքը: Այ՛ր էլ քիչ բան չէ. և անցնող դարը միայն այդ շարժը շնորհեց քեզ, ինչպէս երեւում է աւելիին արժանի շէիր: Բայց այդ շարժումը էլ զոհ եղիր, ճանապարհը արդէն բացված է, ուղին որոշ. գիտես թէ ինչպէս պէտք է դիմես քո բարոյական, մտաւոր և ֆիզիքական ազատութեան:

Անցնող դարը շատերին ազատեց, հայ ժողովուրդ. դու ազատ չես դիմաւորում ՆՈՐ ԴԱՐ. ցաւալի, ամօթալի է, բայց ոչ ինչ:

Սարկական թմբուկիւնդ խանգարված է, շարժուն վիճակի մէջ ես. շարժվիր արագ, շտապով. գնա առաջ, ստացիր այն, ինչոր չը կարողացար անցած դարի մէջ ձեռք բերել, նորը՝ 20րդ դարը քո մահուան և կենաց խնդրի դարն է. այս դարում դու կամ ամբողջովին կը վերածնես, կը լինիս ազատ հայ, ազատ Հայաստանի մէջ, կամ թէ բոլորովին կանհետանաս և քո անունը կը յիշուի միայն քեզ մեռնող դարերի հետ:

Դէ, չը քնանաս, հայ ժողովուրդ. գորտերի կոկոսը անուշ նանի չը կարծես, չը յորանջես և նոր դարն էլ ստրուկ չանցընես...

Շնորհաւոր ՆՈՐ ԴԱՐ, շարատանջ, արիւնքամ, բայց դիմացկուն հայ ժողովուրդ...

Շնորհաւոր ՆՈՐ ԴԱՐ ԵՒ ԲԱՐԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ:

ՎԱՐԳՑ

### ԳԻՇԵՐԱՊԱՅԸ

Մեր թաղին գիշերապահը ծերուկ պուլկար մըն է: Շորեկները չես տեսնար զինքը: Բայց զիշերներն ալ փողոցներուն մէջ շատ չի յածեր իր կքուած հասակը: Կէս զիշերէն անդին, երբ հանգստանալու պէտքը մէնքը քունի թմբուկեմբ պարուրած է, ինք փողոցի մը խաւարչտին անկիւնը կամ տրտմորէն վառող լապտերի մը ձողին կիթնած, մութը կը կը դիտէ սկեպտիկի անյողողդ իմաստասիրութեամբ:

Եթէ երբէք ցորեկ ատեն հանդպիս իրեն, շարչարուած մարդու սպաւորութիւնը կը թողու վրագ: Ճերմըկցած թաւ յոնքերուն սակ աչքերն ազատ փայլով մը կը ցոլան: Տարիներու անողք հերիւնը եւ ապրուած ստապագին կեանքի դառնութիւնը փորած փորիքած են իր դիմագծութիւնը, կնճոռոտելով ու քայքայելով անոր յորդեղակ կայտառութիւնը: Կեանքի անգիտակցական մաքառումը զոր անցուցած է լուկ թունտիկ, իր պնդակաղմ մարմինը վրայ երաշխեպնէր թողուցած է. ամուր կունակը ա՛լ հիմակ ուղղաբերձօրէն չի կենար. կամաց կամաց ծոած է, քամակի այն

աղէտալի կորութեամբ որ կը շեշտուի մարդը օր մը թաւալըր փոսի մը մէջ նետելու համար վերջապէս: Այդ օրը կը դադրի մարդկային քամակին ճկիւր. բայց աւա՛ղ որ կեանքն ալ արդէն մեկնած է:

Գիշերապահը հաստ ու բրդոտ վերարկուին մէջ փաթթուած, ձեռքը հաստ մահակ մը զոր չի հնչեցուներ, դուրսը կզկտած կնգուղին տակ, անվհասօրէն կը սլքատայ մութին մէջ, փութին ու ցուրտին, պաղ արհամարհանք մը նետելով բնութեան մուրցքին ու տարրերու շանթահարող կատաղութեանը: Ջղիկներու ուրուային սլացքները օղին մէջ, կամ ուշ միացած գինովներու տխրական հառաչները ու վայրագ խանչիւնները կուգան մերթ իր աղօտ աչուրներուն սեւեռումը խողտել ու տըրտում խոհանքին սթափում մը տալ սարսափից:

Հէ՛ք տառապող մարդ. երազի պէս կապրի, առանց երբէք ըմբոսխնելու կեանքի հեշտանքին նեկտարը, առանց նայնիսկ ըմբոսնելու այն խաւարալից անդուեղին անաւորութիւնը, որ զինքն ու իր նմանները կանջրպետէ առանձնաշնորհուածներու մեծ փաղանգէն: Անեղի համակերպութեամբ զոր թշուառութեան սահմանուածներուն միխթարութիւնն է կարծես, կեանքը կը քաշկոտէ մութին մէջ, Աստուծոյ պարգեւած լոյսէն իսկ զրկուած: Իր նսեմ ու մութ պատեանին տակ ով դիտէ ի՞նչ մտածումներ կը խոտանան, կը դալարին, կը կաշկանդուին: Ամառը՝ ասաղերուն կը մրմնայ իր հուժկու բայց ծեր կուրծքին տակ փոթորկող յուզումները, գորս ձմրան քամիին սառնաչնչիկ ալիքներն ալ չեն մեղմեր:

Ու կը սողոսկի սոււններուն ու ցանկերուն առջեւէն, պահպանութեան ուրուային խորհրդապատկեր, ինքն իր մէջ ամփոփուած, անհունութեան եւ ստուերոտ անսահման լուրթեան մէջ աննշան հիւլէի մը պէս սահելով: Ու մարդիկ կը քնանան՝ գիշերապահին արթուն հսկողութեան գիտակցութեամբը հանդարտիկ, անոր տանջանքին ու վիշտերուն անմասն ու անտարբեր:

Ձիւնը կուգայ կատաղի մռնչիւններով գալարասանջ. սառը կը պրկուի, կը կարծրայ. բնակութիւնները լուռ կը ննջեն սարսափահար, բայց մեր թաղին պուլկար գիշերապահը իր սխիւտը կերբցնէ մինչեւ լուս փողոցներուն անկիւնները, լուռ եւ անմրմունջ, մտիկ ընելով բնութեան զիւային կանչուըտուըք, քամակը կոր, վլուխը կնգուղին տակ կզկտած, անվեհեր:

Խի՛ղճ մայր: ԵՐՈՒԱՆԳ



— Շնորհաւոր նոր տարի, մայրիկ :

Աննա խաթուն թէեւ պզտիկ շարժում մը ըրաւ իրմէ հեռու մղելու այդ անծանօթ մանկիկը, բայց անոր տաքուկ համբոյրներուն տակ հայեցաւ իր սրտնեղութիւնը. լոյս մը ծագեցաւ իր մտքին մէջ. հասկըցաւ ամէն բան. ու փոխադարձաբար ինքն ալ սկսաւ համբուրել մանկիկը : Գանի կը համբուրէր՝ այնքան կաւելնար իր սգուորութիւնը, իր մայրնի կոյս զգացումները այդ մանկիկին տաք հպումէն կը քակուէին հիմակ, ու դուրս կը զեղուն յորգանոս. Աննա խաթուն գրեթէ կատաղած կը համբուրէր, կը խածնէր մանկիկը. աչքերէն, այտերէն, շուրթերէն, ծնօտէն, ձեռքերէն, ոտքերէն, վերջապէս հանդիպած տեղէն. կը սեղմէր դանի սրտին վրայ, վեր կը վերցնէր, պատուհանին լոյսին կը տանէր, նորէն կը գրկէր, նորէն կը համբուրէր, նորէն կը խածնէր :

Տիգրան աղա, որ իր կաղնիքէն ընդունելութեանը թերեւս քիչ մը կը կասկածէր, այս յաջող արդիւնքը տեսնելով, ձեռքերը շփեց, մտեցաւ սեղանին, գոնեաք մը առաւ, եւ ըսաւ.

— Կնիկ, կենացդ, մանչուդ կենացը :

Աննա խաթուն շարունակելով հանդերձ իր համբոյրի եւ խածնելու արշաւանքը, պատասխանեց.

— Մանչա, այո՛, իմին աղուոր մանչա է ասի, որուն կը սպասէի 30 տարիէ թէ վեր ու հոս գտայ. անուրբ ինչ է ըսիր. Վահրամ, չէ՞. ինչ ալ աղուոր անուն, ճիշդ ու զած անունն, աչքերն ալ խոշոր ու կապոյտ, թուշերը կարմիր, իմ տղաս ես, չէ՞, մեր տղան. ալ ասիկէ ետքը դուն մեզի պիտի ըլլաս, մենք ալ քեզի :

— Կնիկ, չես հարցներ թէ ուրկէց գտայ այս տղան, ըսաւ Տիգրան աղան, իր կնկան մտենալով. շաբաթ մըն է քեզմէ գաղտուկ հոգեզուակ առած էի. եւ...

Աննա խաթուն չի թողուց որ իսօքը լինուէ :

— Ինչո՞ւս պէտք թէ ուրկէց գտար, անչուշտ մեր ազգին հազարաւոր որբերէն մէկն էր ասկէց առաջ, բայց հիմա ալ մերն է ամբողջովին, իմ սիրական գաւազն է :

— Ըսել է, Աննա խաթուն, ա՛լ քէն

չի պիտի բնես, գո՞հ ես ըրած կաղնիքէք :

— Շատ գո՞հ եմ, միայն կը ցաւիմ որ այս նուէրը աւելի ազաջ կրնայիր ընել ու չըրիր :

— Է՛հ, կնիկ, եթէ ես խելք չըրի թող դուն բերր էիր, կարծեմ քու պարտքդ էր :

— Իրաւունք ունիս, ըսաւ Աննա խաթուն, հիմակ կը զգամ ու կը խոստովանիմ որ մինակ յանցաւորը ես էի... ինչ որ է, ալ անցածը մոռնանք, եւ նոր կեանք մը սկսինք հիմա մեր նոր գաւազին հետ :

Եւ երեքը մէկ բոլորուեցան սեղանին շուրջը :

ՎԱՀԱՆ, ՄԱՆՈՒԷԼ, ԵԱՆ ՖԻԼԻպէ

### ՏԱՍՍՍ ՄԱՆՄՈՒՏ ՓԱԶՍ

Սուլթան Համիտի անգթութիւններէն վրդովուած և իր հայրենիքին ողբալի կացութեան վրայ վշտալից՝ Տամատ Մահմուտ փաշայի Պօլսէն փախուստը գրած է ինչք :

Արդ նորագոյն լուրեր մեզ կը հաղորդեն թէ Մահմուտ փաշա իր երկու զաւակներուն՝ Սապահէտտին և Լուիթուլլահ պէյեթրուն հետ Բարիզ հասած և կրանթ-Օթէլ իջած է :

Մահմուտ փաշայի Պօլսէն փախած ըլլալուն լուրը իմացուելուն պէս Սուլթան Համիտի արտաքին գործոց նախարարը փութաց հեռագրել Եւրոպայի մէջ գտնուած իր բոլոր զեսպաններուն հետեւեալ ծիծաղելի բանաձեւը.

«Տամատ Մահմուտ փաշա որ ժամանակէ մը ի վեր յիմարութեան նշաններ ցոյց կուտար, առանց հրահանի մեկնած է Պօլսէն, իր հետ տանելով իր կնոջ կայսերազուն իշխանուհիին երկու անչափահաս զաւակները :

«Արդ, որովհետեւ մեր օրէնքին համեմատ կայսերական ընտանիքին զաւակները բայցարձակապէս կը գտնուին մեր վեհափառ տի-

րոջ ուղղակի իշխանութեան ներքեւ և միւս կողմանէ նկատելով որ Սուլթանուհի մայրը ստիպմամբ կը պահանջէ իր երկու անչափահաս որդիները, կը խնդրեմ ձեռքէն որ անմիջապէս ի գործ դնէք ձեր յարմար դատած կերպովը ամենէն ազդեցիկ միջոցները մանրամասն հետախուզութեան մը համար և երբ տեսնէք թէ Մահմուտ փաշա ձեր գտնուած երկրին սահմաններուն մէջ կը գտնուի և կամ կը հասնի, հարկ եղածը ըրէք տեղական իշխանութեան քով որ պէս զի անիկա անմիջապէս իր երկու զաւակներովը զորս առանց իրաւունքի առած տարած է, ընդ հսկողութեամբ Պօլս խորհուրի :

«Սուլթանի հրահանաւը հեռագրեցէք ինձ ձեր ջանքերուն արդիւնքը :»

Երբ Մահմուտ փաշան տանող շոգենաւը Մարսէյլ կը հասնի, մամուլի ներկայացուցիչները զարմանքով կը հաստատեն թէ պաշտօնական հեռագրով խենդ հռչակուած անձը ո՛չ միայն ուղեղային ունէ խանգարում մը չունէր հապա նաեւ շատ զարգացած, ազատամիտ և խելացի մէկն էր. նաեւ հաստատեցին թէ երկու անչափահաս ըսուած զաւակները հասուն երիտասարդներ էին որոնց փոքրը արդէն 22 տարեկան կար, հետեւաբար ինքնիշխան և իր կամքին բացարձակ տէրը ու Սուլթան Համիտի նման գաղան մօրեղբօք մը խնամակալութենէն բոլորովին չերթ :

Բարիզի դեսպան Միւնիւր պէյ հեռագրին առնելէ յետոյ երբ իմացաւ թէ Մահմուտ փաշա դէպի Մարսէյլ ճամբայ ելած է, անմիջապէս մարդ խրկեց Մարսէյլ շոգենաւին մէջ փաշային որ Պօլս վերադառնայ. սակայն ապարդիւն եղաւ ամէն ջանք, այնպէս որ Սուլթան Մէճիտի այս

խրոխտ փեսան, Սուլթան Համիտի այս ըմբոստ քեռայրը՝ ու թուրքիոյ արդարութեան գործոց նախկին նախարարը՝ Տամատ Մահմուտ փաշա՝ Բարիզ հաստատեց իր առժամանակեայ բնակութիւնը՝ մերժելով ամէն առաջարկ և խոստում. Բարիզի մէջ Միւնիւր պէյ, առանց համարձակելու բռնի միջոցներով Մահմուտ փաշան անհանդիստ ընել ինչ որ շարժելու կրնար՝ այն պատճառաւ որ փաշան ո՛չ յիմար է, և ոչ ալ իր զաւակները անչափահաս են և ոչ ալ իր վրայ մէկ միլիոնի հաշտութիւն ունի կամ վերջուցած է տունէն, ինչպէս Եւրոպայէն տարածել ուղած էին զայն իբր գող ցոյց տալու, գրեթէ ամէն օր կրանթ-Օթէլ կերթեւեկէ որպէս զի փաշային որդիները համոզէ ու Սուլթան Համիտի փափաքը տեղը երթայ. սակայն Մահմուտ փաշա ոչ միայն Միւնիւր պէյի քիթին կը խնդայ, հապա նոսակ մը գրեւով «Մէջվերէթ» խմբագիր և երիտասարդ թիւրքերէն Տ. Ահմէտ Բիդալի, կը գովէ անոր հայրենասէր ընթացքը և կը ցաւի իր երկրին կացութեան վրայ հետեւեալ բառերով.

Բարիզ, Կրանթ-Օթիլ, 25 Դեկտ.

Տ. Ահմէտ Բիդալ պէյ,

Աւելորդ է ձեզ բացատրել այն խորին երախտագիտութիւնը որով լցուած է իւրաքանչիւր օսմանցի ձեր շատ լուրջ ծառայութիւններուն համար զորս կը մատուցանէք ի նպատակ մեր հայրենիքի նուիրական դատին :

Ձեր արժանիքը մեծ է այն պատճառաւ որ ինքզինքնիդ զոհեցիք օսմանցի մահամբձ ժողովրդին հետ նոր կեանք մը պատրաստելու համար : Ամէնուն տրուած չէ ձեզ նման մնալ անյողող ու քաջ կարգ մը անհամար գժուարութիւններուն մէջ որոնցմով պաշարուած կըլլան ձեր ընթացքը ունեցողները :

ԹՂԹԱԿԻՑ

Իզմիր, 8 Դեկտ.

սրբազանը չի ուզեր պիւտճէի յաւելում... Ասիկայ հին օրերու հեռա նկարը կը պարզէ մեր աչքերն... Կիրթ ուսուցիչներ՝ հմուտ տեսչի մը տրամադրութեան տակ ընկալանաբար խելահաս սերունդ մը կրնան արտադրել, իսկ ասիկայ կրնայ փորձութիւն ըլլալ ասպազային. չը պէտք է թոյլ տալ որ այդ տղաքները «չարն ու բարին» ճանչնալու չափ յառաջ երթան, պէտք է սեղմել կապերը... անա առաջնորդ սրբազանին յատակազիծը, Ասիկայ, ընթերցող, նորա պաշտօնին մէջ. իսկ պաշտօնէն դուրս իր անձնական տեսակցութեանց մէջ ալ նմուշ մը տալ պարտք կըզգամ քանի որ միևնոյն ժամանակին եւ միևնոյն քաղաքին մէջ տեղի կուտանայ :

Սրբազանը կարգ մը տեղացի երեւելիներով շրջապատուած, խօսակցութեան մը պահուն կը յայտարարէ թէ՛ գաւառացիները ստակալի կոչտ կոպիտ մարդեր են, որոնք ամէն տեսակ խարդախութեան ընդունակ

ըլլալով, պէտք է զգուշանալ անոնցմէ, պէտք է տեղ չի տալ անոնց, այլ երեսէ ձգելու է... Այս յայտնութիւնը զոր այդ ճարտարին կազմուածքը թոյլ տուած է ինքնիշխան արտասանելու, ներկայներէն ոմանց նկատողութեան կարծանանայ թէ և բայց ոչինչ, նա ամբողջներէն չէ...

Գըրգ-Աղած ըսուած տեղը 150-200 տուն հայ կայ. հոն ալ աղջկանց դպրոցի խնդիր մը կայ եղեր, Սյոք տեղի թաղական խորհուրդին հովանաւորութեան տակ կողջ այդ դպրոցը ժամանակէ մը ի վեր է որ գոցուած է եւ վարժուհիին ալ քանի մը մէճիտ առնելիքը մնացած է : Վերջերս տեղւոյն երիտասարդներէն ոմանք կը ձեռնարկեն ընկերութիւն մը հաստատել եւ աղջկանց դպրոցը վերաբանալ. ու իբրաւ ալ կը յաջողին, որոջ պիւտճէ մը ապահովելով Իզմիրէն վարժուհի մը կուզեն, որուն մասին սրբազանին գրելով կը խնդրեն իրենց ընտրած վարժուհին վաւերացնել, որպէսզի եր-

թաղով դպրոցը շարունակուի : Բայց ի զուր, սրբազանը ոչ միայն չի վաւերացներ օրերորդ, այլ կը յայտարարէ թէ միևնոյն նախորդ վարժուհիին պարտքերը չի հատուցուի, զպրոցը չպիտի բացուի... Ի զուր կուզեն հասկնել իրեն թէ նախորդը նորին հետ ունէ կապ չունի, որ անիկայ թաղականութեան կը վերաբերի, իսկ իրենք այժմ առանձին ընկերութեամբ մը պիտի կառավարեն զպրոցը եւ այլն...

Սոստանող մը որ այսպիսի տարական եւ անմիջական պարտականութիւնները այս մէթոտով, «գիւլանազիտական» այսպիսի ուղղութեամբ կը կատարէ, առաջնորդ մը որ ընդհանուր ազգին դատակարարութեան մէջ որոմներ ցանկու ետեւէ կըլլայ լպիլը արտայայտութեամբ, ալ կարելի է սպասել որ նա խելոճ գաւառացիներու, որոնք իրենց երկար ճամբորդութիւններէն գալով հոս բանտերը կիչնան, կը մնան, առոնց համար միջնորդէ, բան մը

որ բացարձակապէս ոչ միայն կարհամարհէ, այլ դու նախատինք ալ կը թափէ, անէ՞ք ալ կը տեղայ...

Օրերս բաւական թուով Մշեցի, կարնեցի և Խարբերդցիներ եկած են զանազան կողմերէ ու բանտարկուած են հոս : Ատոնց հայրենակիցներէն ոմանք կը դիմեն առաջնորդ սրբազանին որ պէտք եղած օգնութիւնը ընձեռէ, որոնք եթէ առանց դրամի եւ զրկուին ծայրայեղ թշուառութեան պիտի մատնուին. զոնէ քանի մը փարայի օգնութիւն ընձեռել. Ի զուր, սրբազանը կը յայտնէ թէ ինքը բան մը ընկելու կարող չէ... և կը յայտնէ ալ թէ «Օրմանեանիննէ յանցաւոր, որ կը յայտարարէ թէ անցուղարձեբը արտօնուած են»... Ալ դուք մտածեցէք թէ ուր հասած ենք :

Անելի ճիշդը խօսած ըլլալու համար կաւելցնեմ թէ Թուրքիա իր ծոցէն այս վերջի մէկ դարին մէջ չէ արտագրած ձեռնման ու իշխան մը . եթէ Պոլսոյ նամանաւանդ Սուլթանին շուրջիններուն մէջ եղած ըլլալին ձեռնման արգարութիւնը և ճշմարտութիւնը սիրող անձեր, կասկած չունիմ որ պետութիւնը այսօր այնքան չարիքներու և դժբախտութիւններու մէջ չէր մնար . բայց, աւա՛ղ, ժողովուրդը գրեթէ բոլորովին դիակի վերածուած գիշատիչ անզգեցիտ մագիլներուն զոհը եղած է . աչքեր կան որոնք ձեր զոհողութիւնները տեսնել չեն ուզեր և ականջներ կան որ ձեռք լսել չեն կրնար . Ահա ինչո՛ւ համար մեր ազգին նման մեծ ազգ մը ճշմարտ է Ապտիւլ Համիտի պէս բռնաւոր և տգէտ մէկու մը ճիրաններուն մէջ :

Այն կառավարութիւնները որոնք մարդկութեան դատին ծառայելու յաւակնութիւնը ունին, ոչինչ կրնան մեր տարաբախտ ժողովուրդին համար, ընդհակառակը կը ջանան որ զայն ա՛լ աւելի ոչնչացնեն . Անհերքելի է որ եթէ այդ կառավարութիւնները ուզէին լրջութեամբ գործել մարդկութեան դատին օգտին համար, մենք այս վիճակին չէինք հասներ . Մեր դրացի ժողովուրդները կը դիտեն միլիոնաւոր հոգիներու խղճուելու մօտ վիճակը և հաճոյք կը զգան անկէց որպէս թէ թատերական երեկոյթի մը ներկայ եղած ըլլալին . Որոնցմէ՞ որեւէ օգնութիւն փնտռելու և յուսալու է :

Մեր այս վիճակին մէջ իսկ, թէեւ սրտերնիս չափազանց ընկճուած, պէտք է ըսենք թէ գեռ կրնանք փրկուիլ այս կորստելու վիճակէն, որուն մէջ կը տապալու աղկիւնք . որեւէ շյուսահատիւնք, ձեռք ձեռքի տուած աշխատիւնք և գիտցէք որ մեր փրկութեան օրը չի պիտի ուշանայ ծագելու :

Տախտ Մահմետ փաշա

Ասկից զատ Մահմետ փաշա երկար նամակ մը գրած է Սուլթան Համիտի . որուն մէջ բացատրած է ինչ որ կը մտածէ Համիտի և իր կառավարութեան վրայ և որ մօտերս հրատարակութեան պիտի տրուի :

Գալով Սապահետին և Լուիս-Ֆուլլան պէյերուն, երկուքն ալ ընտիր գտտութարակութիւն ստացած երիտասարդներ են որոնք մտադրած են մինչև վերջը օգնել իրենց հօր բարձրացնելու համար իրենց մեծ հօր Սուլթան Մէհմետին այնքան մեծամեծ ճիգերով և զոհողութիւններով պահած ու պահպանած օսմ. կայսրութեան «բրէսթիժը» :

Մեզ կը թուի թէ այս պէյերը քիչ մը ուշ մնացած են ազատելու համար Թուրքիան որ ոչ

միայն այսօր դիակ մըն է, հապանելու իսկ սկսած :

Մուրատ պէյէն յետոյ Տամատ Մահմետ փաշա մեծ յոյսեր չը ներշնչեր մեզ :

Եթէ արգարեւ Սուլթան Համիտի այս քեռայրը ցաւած և զայնթակցած է իր աներձագին արարքներէն և Թուրքիան այլևս անընտելելի երկիր մը ենթադրելով խոյս տուած է անկից ու հիմա ձեռք ձեռքի կուտայ Ահմետ Իրզաի հետ, որպէս զի Համիտի դէմ պայքարը աւելի շեշտուի, ասի բարեքում չի նշանակեր և ոչ ալ Սուլթան Համիտի նման հրէշները կազմուին անկից :

Հիմնովին դարմանը շատ աւելի տարբեր է քան Եւրոպա պատանիւրը և 15 օրը անգամ մը «Մէշվէրէթ» հրատարակելը ինչպէս նաեւ աշխատիլը որ Միտհատ փաշա պատրաստած սահմանադրական օրէնքը վերահաստատուի :

Երեսփոխանական ժողովի մը գոյութիւնը երբէք Թուրքիոյ բարեքում չի բերեր . Երբ ժողովի մը անդամներուն ստուար մասը Թուրքերէ բաղկացած է, անտարակոյս այդ ժողովին մէջ քրիստոնեայ տարբերուն շահուն ի նպաստ որոշումներ չպիտի տրուին որով ինչպէս հայերը նոյնպէս և ամէն քրիստոնեայ ցեղերը պիտի աւնջուին հոն միշտ ու միշտ :

Ուրեմն մեզ համար ոչ Մահմետ փաշաի փախուստը և երիտասարդ Թուրքերու հետ միանալը օգուտ ունի, ոչ ալ Սուրատ պէյի կամ Անմեղեանի մը վերագարձը . մեզ օգտակարն ու պիտանին շարժիլն է միշտ, շարժիլն ու շարունակ շարժիլը . Ստոր միայն ուշադրութիւն պէտք է դարձնենք ու շոգեւորուինք երբէք երբ վրատած մարմնէն հիւլէ մըն ալ կը բրդի և կը բաժնուի անկից :

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Պօլսէն կը գրեն՝  
Սպանիոյ ձերբակալութիւնները ալ աւելի շատցած են այս միջոցին . Թաշ-Խըշլասին զինուորականներու բանա մը եղած է այսօր . ամէն կողմ՝ նկուզներու, մառաններու և քիչ շատ ապահով կարծուած սենեակներու մէջ լեցուն են օրերով և շաբաթներով արգիլուողներ :

Այն սպանները կամ զինուորները որոնք «խըշլախն» բազէն կանցնին և բանտի վերածուած սենեակներուն պատուհանը կեցած բանտարկեալ մը կը բարեւեն, անմիջապէս կը բռնուին, խիտ հարցաքննութեան կենթարկուին և կը բանտարկուին . Անցեալները պարզ զինուոր մը զինուորական օրէնքին համեմատ պատուհանէն նայող սպայ մը, որուն բանտարկուած ըլլալը չէր

գիտեր, բարեւելուն համար 8 ամսուան արգելանքի ներքեւ գրուելու գատապարտուած է :

Վերջապէս դողը ամէնուն սրտին մէջն է և սարսափը հաւասարապէս կը տիրէ ժողովրդին ամէն դասակարգերուն մէջ առանց ազգի և կրօնքի խտրութեան :

Թուրքերը առած մը ունին որ կըսէ «բարա իլէ տէյիլ սըրա իլէ տիր» . հիմակ ալ կարգը իրենց է, ասնջուելով տեսնենք անոնք որքան պիտի դիմանան :

Իւլէմա Զիա պէյին և պետական խորհրդական Սայիտ և Թէրտի պէյերուն մասին՝ որոնք աքսորուեցան՝ զեռ լուր մը չկայ . Ոմանք կըսեն թէ զիրենք տանող շոգեւոր «Բուրգ-Սախտէն» անցած է, սակայն չեն ըսեր թէ գատապարտուները մէջն էին . գուցէ մինչև այսօր Միջերկրականի ձուկերուն կերեղած են և կամ կարմիր ծովը պիտի կլլէ զանոնք եթէ սակայն Եմէնի Պէտուիներու ճիրաններուն մէջ ինչալ վիճակուած չէ իրենց :

Կըսեն նաեւ թէ Պոլսոյ իւլէմաները չպիտի ընդունին իրենց մէ մէկուն Սուլթանին կողմանէ յանիբաւի գատապարտուելուն վճիռը և խիտ կերպով պիտի բողոքեն :

Բամազանի մէջ ենք և ամսավճարներու խնդիրը մեծապէս կը զբաղենք Սուլթանը և Մալիէն . Վերջերս օսմ. պանքան 20,000 ոսկիի փոխատուութիւն մը ըրաւ կառավարութեան որպէս զի «Սուրբէի հիւմայունի» ծախքերը հոգացուին, իսկ պաշտօնեաներու գրամ տրուելու համար գեռ տասը փարայ անգամ չկայ . կը մտածուի հանրային վարչութեան փոխ գրամ առնել . Եթէ այս ալ չյաջողի այն ստեն պիտի դիմեն գաւառները, զանոնք պիտի կթեն և կամ երկրագործական պանքաներուն մէջ մնացածը առնելու ելնեն :

Բամազան 15 ին առթիւ ձերբակալութիւնները սկսան . Թուրքերն են որ հիմա բանտերը կողողեն ու եթէ այսպէս երթայ, հայերուն նման Պոլսոյ մէջ ամէն թուրք բանտի գոնէ մէկ անգամ պիտի համարուէ . անցեալները մէկ քանի թուրքեր երանի կուտային հայերուն որոնք կըրցան սակից երեք տարի առաջուան դէպքերուն ստեն աւարգել փախչիլ և հեռանալ Տաճկաստանէն . Ո՛րքան թուրք այսօր ինքզինքը արտասահման պիտի նետէր, եթէ թոյլ տրուէր ու միջոց գտնուէր :

Կազէթ Թրանքֆուրթի Պօլսէն կը գրեն թէ Խալալութեան ժողովին տաճիկ պատգամաւորները Թուրքիան և նուրի փաշաները Լահէէն վերագարձին Փարիզ պիտի անցնին Տամատ Մահմետ

մուտ փաշային հետ բանակցելու համար :

Թիֆլիզէն կը հաղորդեն թէ շրջակայ գիւղերէն տասը երկրաշարժէն աւերած են . 600 հոգի կորսուածներ կան :

Պրանսական Ալգային ժողովը 400 միլիոն ֆրանքի վարկ բացած է ծովեզերքները ամբարացնելու համար :

Հնդկաստանի մէջ կը տիրապետէ սովը, ժանտախտը և խոզիութիւնն սահմանազուխներուն վրայ :

«Թամզոյի Վիէննայի թըղթակիցը կը հեռագրէ թէ Ռուսական զինուորները կը պատրաստուին Աֆղանիստան մտնալ :

Ռուսիոյ հարաւային մասերուն մէջ սով կը տիրէ :

Թրանսվալ զաշնակներու բռնարով մեծ քանակութեամբ ումը մտած է . անգլիացիներն ալ կը զարմանային թէ Պօէրնբըրը ե՛րբ սորվեցան զաշնակի վրայ նուազել . Այդ զաշնակները Լորէնցօ Մարքէշի վրայով զրկուած են :

Շուտով Պարսից շահը պիտի ստորագրէ ռուսական ընկերութեան պայմանաթուղթը Պարսկաստանի մէջ երկաթուղի շինելու :

Թ.ՏՐՈՒՆ «ԱՆԻԼԷՍՍԻԱՎՈՅ»  
«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, Յունվար 1, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Ափրիկէի Աղջիկը» սրամ-գօմէտի 4 արար :

Վազը կերակի գիշեր, Յնվր. 2, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Մուրացիկներու գողերը» սրամ-գօմէտի 4 արար :

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ  
ՆՈՐ ԲԱՑՈՒՍԻՆ  
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ  
Թիւ 389 Իսկիդ-պաշի

Կը վաճառուի ծրարտտ, բոսթայի և աղերսագրի ամէն տեսակ բուլբու նաեւ զանազան տեսակ սիկարներ . 94 Թուականին հրատարակ ելած Պուլկարիոյ գահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փօթալներ, որ այժմ չեն գործածուիր . նոյնպէս և կը վաճառուի «Շարժում» : Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան գիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը :

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՆՍԿԱՅԻՆՈՑ

Հին և նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա . Ա. Զարգիսնէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարգացկան և վիպական գրքեր . դրամի փոխարէն կընդունին նաեւ նամակագրութիւն . Գնուի և վաճառուի ամէն տեսակ գործածուած նամակագրութիւններու :